

սեան բերդը, եւ անոր համար իրենց դէպ ի արեւմուտք ուղւոյն զիծն ըլլայ՝ հիւսիս-արեւմտեան սահմանակողմերուն համար՝ իբր կարին-Երզնկայ-Գերջան, եւ այն ուղղու-թեամբ մտան Գամրական աշխարհները, եւ վերջնականապէս կործանեցին (676ին) Մի-տասեան հարստութիւնը՝ որ կ'ըլլէր Փոխ-զացւոց եւ Մոսքաց վրայ: Կիմմերացւոց շար-ժուսն արդէն արդիւնք էր Պոնտոսի հիւսիսոյ եւ արեւմտեան վերնափանց աղբայ շարժում-ներուն, եւ շարժման մէջ մտան սկողոտեան Սկիւթացիք եւ Թրակեան այլեւայլ տոհմեր, որոնք Փոքր Ասիա մտան եւ վեր ի վայր ըրին այլեւայլ կողմանէ, մանաւանդ նաեւ արեւ-մուտքէն (Բիւթիկացիք եւն) եւ ասով մղե-ցին այն կողմանց ազգերը դէպ ի արեւելք: Եւ երբ Լիւզացիք զօրացան եւ կրցան գերել-խան ըլլալ Ազիւսէ անդին բովանդակ Փոքուն Ասիոյ եւ ետ մղել Կիմմերացիները, վեր-ջինքս նորէն դարձան Գամրական աշխարհ-ները. եւ այսպէս Թրակեան-Կիմմերական շփոթութեանց ատեն իրենց վերջէն հայրենիք գտնող Գամիրք (= Կիմմերացիք, արձ. Gim-mirri, «Գոմեր», որ կը նշանակէ «հիւսիսա-կան», այլեւայլ տոհմեր) իրապէս պատճառ եզան այդ նախապէս ընդարձակ մտօք «Կիւլ-կիա» աշխարհաց բնակչաց զիմելու դէպ ի Ռերարտու, ըլլան Հատք, ըլլան՝ անոնց հետ խոնոնուած՝ Արմէնք, ըլլան ուրիշ տոհմեր, ինչպէս նոյն իսկ Կիմմերացւոց մէկ մասը: Թողունք սակայն այս ամէնը: Պատմական ժա-մանակի մէջ Հայք՝ երբ կրցան ստեղծել Արեւելեան եւ Արեւմտեան (Ծովաց՝ ընդար-ձակ մտօք) թագաւորութիւնները (190 Ն.Ք.) կրցան նաեւ Եփրատայ վերին բազկին արեւ-մըտակողմը ստեղծել «Փոքր-Հայք» մը: Բայց վերջինս սպառնալիքի տակ էր Պոնտոսի կող-մանէ՝ նոյն իսկ ծագման օրէն եւ Փառնա-կայ Բ. կը յաջողէր կատարել — քանի որ նոյն իսկ Փոքր Հայոց «կուսակալը» Միհրգատ կող-մակից էր — եթէ փոքրասիական բոլոր դաշ-նակիցք (Գամիրք, Պերգամոն եւն, նաեւ Մեծ Հայք) առջեւ չառնուին անոր աշխարհակալու-թեանց (180ին): Դար մը տեւեց այս վիճակը, բայց Միհրգատայ Մեծի օրով Փոքր-Հայք եւ Կողքիս անցան Պոնտոսի, ուստի Տիգրան Մեծ՝ կցելով Արեւմտեան Հայաստանը, չէր կրնար կցել նաեւ Փոքր Հայքն ամբողջովին: Եւ Տիգրան, Պոմպէական դաշնագրութեան ա-տեն, երբ ստիպուած էր ետ ալ ոչ միայն Մելիտինէն, այլ նաեւ Ծովքը, բնականապէս

չէր կրնար առնուլ Փոքր-Հայքը՝ որ պոնտա-կան էր եւ արդէն իրեն չէր վերաբերել, թո՛ղ թէ աւելի անդին: Փոքր-Հայք մնաց անուա-կան իշխաններու տակ՝ իբրեւ հռոմէական ձեռնակերտ, եւ երբ Հռոմէացիք բաժնելով Պողմոնական Պոնտոսը, — որուն մաս եղաւ եւ մնաց ամբողջ Կողքիսէն՝ նորակառոյց Սե-րաստիայով — աւատ տուին Պողմոնի տան, ժամանակ մ'անոնց անցաւ Փոքր-Հայքն ալ, մինչեւ որ դար մ'ետքը՝ ամէն այս աշխարհք ի միասին ձուլուեցան Կապադոկիոյ ըն-դարձակ նահանգին մէջ (Փոքր Հայք 64ին Յ. Ք.): Հայք կրցան Ծովաց աշխարհները նորէն ձեռք բերել, բայց այս հիւսիսակողմը՝ Բարձր Հայոց դաւառներէն անդին չկրցան երբեք այնուհետեւ տիրել որեւէ ժամանակ: Գիտիկապիտանեան բաժանմանէն նոյն իսկ դար մ'ետքը միայն Սերաստիա-Սատաղա շրջանը բաժնուեցաւ իբր ուրոյն մաս Փոքր Հայոց (Ս. Հայք)՝ դատուելով Մելիտինեայ շրջա-նէն (Բ. Հայք) Թէոդոսի Մեծի օրով (378էն քիչ ետքը): Սերաստիա ուրեմն — դարերով պոնտական ըլլալէն եւ իրեն մայրաքաղաք ունենալէն ետքը զնէոկեսարիա — կրցաւ հռոմէական-Հայ աշխարհարածնի մայրաքա-ղաք ըլլալ միայն ճիշդ այն ատեն, երբ բուն «Հին Հայաստանը» կործանելու վրայ էր (բա-ժանուին Յունաց եւ Պարսից մէջ՝ 387ին): — Ահա հարեւանցի ուրուագծեալ պատկեր մ'ալ փոքրասիական եւ հայական դաւառաց՝ Եփրատայ վերնաբազկին վրայ, որուն ար-դիւնքն ամենեւին չի տարբերել նախընթա-ցէն՝ Մելիտինեան շրջանին եւ այսօր — եւ անդրեփրատեան աշխարհաց մասին մեր տե-սածէն:

(Շարունակելի:)

Վ Ա Ն - Տ Ո Ս Պ Ի Վ Ա Ն - Գ Ե Ր Ը

(Շարունակութիւն:)

Շատ կարեւոր տեղեկութիւններ կը բո-վանդակէ հետեւեալ յիշատակարանը 1318ին եւ յաջորդ ժամանակին Վարազայ մէջ եղած անցուդարձերու նկատմամբ՝ «Փառք... որ հասոցց զիս յաւարտ մա-տենիս... Արդ յամս վերադիտողութեան եր-ջանիկ հողերը Տեառն Զաքարիայի Հայոց գիտապետի եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս հողէկիր վեհիմաստ հովուապետի

Տեառն Պետրոսի եւ (Երկրորդի) նորին Յո-վասափի գրեցաւ տառս աստուածային ընդ հովանեաւ Ս. Նշանիս Վարազայ յոյժ տառա-պանաք եւ նեղութեամբ ձեռամբ անարժան կրանաւորի Յակոբի ի թուիս հայկազեան տուարիս ԶԿԷ յայտ ամի, յորում ծփին ամենայն երամք քրիստոսափառաց ի շնչմանէ նետողական ազգին Ղարբանդաղուլն զանի, վիչելով ի նա սատանայ՝ հարկ հրամայեաց առնուլ յամենայն քրիստոնէից վասն հաւա-տոցն որ ի Քրիստոս եւ նշան կապոյտ հրա-մայեաց կարել ի վերայ թիկանց հաւատացե-լոցս: Եւս առաւել ի կրանաւորացս հարկ առնուին առանց Ղանի հրամանին. յետոյ երկուց երանեալ երջանիկ հայրապետն Զաքա-րիայ հետ Ղանին զնացեալ մինչեւ ի Բարե-լոն ամ մի ողջոյն եւ առելիս առեալ ի նմանէ զկրանաւորքս եւ զբահանայան ազատեաց ի հարկապահանջութենէ: Այլ եւ յաշխարհա-կանացն եւ ի աղայոցն առնուին: Որոյ դար-դիս խաղաղական կենաւ շնորհեցէ նմայ Տէր եւ իւրոցն ամենայն եւ զելիցն յիշատակ աւրհնութեամբ ի Քրիստոս:

Եւ յայտ ամի դարունն առին զհարկն եւ աշունն Ղանն մեռաւ: Եւ այլ եկին ոմն անուն Աղլաղու, Սինթամուր եւ Հասանթամուր ՌԳԾ մարդով եւ կրկին հարկ առին յոյժ ան-չափ եւ ոչ ոք ընդդիմացաւ նոցա: Եւ վանո-րայքս որ ազատ էին, զոր ըմբռնեցին անհնա-րին տանջանաք շարշարեցին եւ անչափ դա-հեկան առին. մանաւանդ սուրբ ուխտս մատ-նեցաւ ի ձեռս նոցա. յանկարծակի զաղտարար եկին յերեկունն եւ ամենեքեան փախեաք եւ զորս ըմբռնեցին՝ անհնարին տանջեցին եւ ոչ կարեմք պատմել եւ քաղաքի Տաճկինիս բա-ղում ինչք տուին եւ հազիւ թափեցին ի ձեռաց նոցա: Եւ այլքս որ փախեաք, այլ չիշխեցաք գառնալ ի վանքս զի հանապաղ գտիւ եւ զգի-չեր ի խնդիր Ելանէին մեղ եւ մեք ահարե-կեալք ի նոցանէ ահիւ եւ զողութեամբ կէաք զցայդ եւ զցերեկ ի սուրբ լեռինդ ի խորս եւ ի ձերպս վիմաց եւ նոքա ամեն աւր գային եւ գեկեղեաց գոներն եւ զկեցերոյն զամենն բա-ցին եւ յաւարի տարան զինչ որ գտաւ: Բայց սուրբ Յոհաննիսայ դուռն միայն մնաց, վասն զի ճգնազդեաց փակակալս մեր Ղազար կրաւ-նաւոր զահ եւ զերկիւղ ի բաց եղեալ եւ յեկե-ղեցին կացեալ բազում առուրս այլ ընկերաք եւ սուրբ Նշանն պահեաց զնոսս եւ ափշեցոյց զսիրտս այլազգեացն որ ոչ մաքառեցան ընդ դուռն երկաթի: Եւ այլ բազում վիշտ եւ նե-

ղութիւն եւ տառապանք կրեցաք յամենայն զիմաց յամարանի եւ ի ձմերանի փախստեա լինելով եւ բացաւթեայ կելով ի սուրբ լե-րինդ...: Եւ մեք ամէն կրանաւորքս Կ. ա-ւելի երկոց երանեալ առաջնորդաւս մերով աէր Պետրոսի որ ոչ եթող վարատիլ մի ոք ի մէնջ... եւ մեք ի տեղս հաստատուն կա-ցաք վասն սուրբ Նշանի սիրոյս» (Աղղր. Հանդ., 1904, ԺԲ., էջ 162—164. հմմտ. եւ Ակիւնեան Հ. Ն., Գաւազանագիրք, էջ 55):

Եւ արդ աղաչեմ զամենեւեան զբնակիչ սուրբ ուխտիս զհողերը հարսդ եւ զեղ-րարսդ, որ յանդորրութեան իցէք եւ յայլ ժամ յիշեալիք զայժմու նեղեալքս ի սուրբ յա-ղաւթս ձեր... եւ առաւել զպատուական ա-ռաջնորդս մեր զտէր Պետրոս եւ զտէր Սար-գիս եւ զՅովասափ եւ զտէր Աւետիս եւ զտէր Յովսէփ եւ զփակակալս մեր զճգնազդեաց կրանաւոր Ղազար եւ զերկրորդ նորին Յո-հաննէս քեռորդի տեառն Պետրոսի եւ զՍտե-փաննոս ձերունի եւ զայլ հողերը հարս եւ զեղրարս եւ զհայր փոխան Սարգիս, որ բա-ղում վիշտս կրեաց...: Ընդ նոսին հուսկ յե-տոյ քան զամենեւեան զՅովսէփ կրանաւոր եւ զմեղապարտ ծառայս Յակոբ գրիչ եւ զմեր ծնողսն:

Աստանաւր յիշեալիք ի Քրիստոս զհան-դուցեալ ննջեցեալսն զառաջնորդ սուրբ ուխ-տիս զմեծն գտէր Պետրոս եւ երկրորդ նորա զկարապետ եւ զՅովսէփ միայնակեաց Գան-ձակեցի որ յառուրս սորա եւ հրամանաւ եւ կամաւ նորին զսուրբ Նշանն ի հիմանէ վերստին շինեալ նորագեաց եւ զՅակոբ միայ-նակեաց... եւ զհողերը հայրն մեր Վարդան կրանաւոր ուսուցիչն իմ եւ զԹումայ կրաւ-նաւոր եւ զԳանձակեցի Վարդան եւ զՍտե-փաննոս Անձղնապատեցի եւ զՎարդան եւ զՍտեփաննոս միայնակեացք եւ զՅովսէփ կրանաւոր եւ զայլսն ամենայն որ յառուրս մեր...:

Այդ այտմ աստուածային տառիցս ստա-ցող եղէ ես Յակոբ անարժան կրանաւոր...: Բայց գրեցաւ առ ի հոյակապ եւ հուշակաւոր սուրբ ուխտս Վարազայ ընդ հովանեաւ աս-տուածընկալ սուրբ Նշանիս յառաջնորդու-թեան երկոց երանեալ Տեառն Պետրոսի եւ նորին երկրորդի Յովասափի...: Արդ զրե-ցաւ սա յիշատակ ինձ եւ Յովսէփայ կրաւ-նաւորի, որ է իմ ազգական, որ զթուղթս կո-կեաց...»: Սոյն ձեռագրին մէջ կը յիշուին ցեր ցան Սարգիս կրօնաւոր փակակալ, Ղա-

դար փակակալ, Սարկաւազ կրօնաւոր, Յա- կոր Գանձակեցի, Սարգիս կրօնաւոր եւ «Յովակէի միայնակեաց շինող Ս. Նշանիս» (Արարատ, 1915, էջ 282—288) :

Ստուգելու ինչպէս յիշատակարանէս կը տեսնուի շատ ծանր օրեր տեսած է Վարազ, բայց բարեբաւորէն ունեցած է կորովի ա- նաջնորդ մը՝ Պետրոս եպիսկոպոսը⁴¹, որ զլիւաւորաբար իր Յովասափ եւ Կարապետ ընտիր օղնականներու հետ կրցեր է տառա- պանքներու տոկալ եւ աւերակները վերա- կանգնել⁴² :

Ասկէ բաւական վերջը՝ 1354ին Եփրեմ քահանայ՝ որդի Գրիգոր քահանայի ժառան- գաբար ստացուած Աստուածաշունչ մատեան մը Վարազայ սուրբ Նշանին կը նուիրէ «այնու դաշամբ զի միաբանք սուրբ ուխտին եւ քա- հանայք նորա յորժամ հասցէ զիրքս առ նոսա զկարգ քահանայաթագմանն արասցեն բո- վանդակ եւ արասցեն զգիշերային պաշտօնն եւ օճցեն խաչ սուրբ յանուն հօր իմոյ Գրի- գոր քահանային եւ զեօթն աւուր ընթերց- մունքն զաղօթան կատարեսցեն կարգաւ (Չարրհանէլեան, Մատենադարան, էջ 145— 146. հմմտ. նաեւ Սարգիսեան, Մայր Յու- ցակ, էջ 93—95) : Գրեթէ յիսուն տարի յե- սոյ Սոզմոնի Առակներն ու ժ. մարգա- րէից զիրքը, զրուած 1392ին, Թուրքերու ձեռքէն կ'առնուի եւ հաւանօրէն Վարազի կը յանձնուի՝ «Կաման Աստուծոյ ազատեցաւ զիրքս ի թուրքաց եւ ի տէրն զարձաւ. յամի Պ եւ ԽԱ. թուին զրեցաւ սա ի Վարազայ եւ թափեցաւ ձեռամբ աւրհնելոյն յԱստուծոյ Մկրտիչ երեցուն ի Բերկրի քաղաք» (Ակի- նեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 193) :

⁴¹ Կարելոր է եւ այս յիշատակարանը՝ «Գրեցաւ սուրբ աւետարանս յամս վերադիտողութեան Տեանն Ստեփաննոսի Հայոց կաթողիկոսի: Ի զրան հոյակապ եւ հոգեակաւոր եւ աստուածընկալ սուրբ Նշանիս Վա- րազայ: Յառաջնորդութեան սուրբ ուխտիս Պետրոս վեհափայտ հովուապետի եւ Կարապետի խոհական գիտնականի, որ ընկալաւ զաղօթութիւնս մեր: Գրե- ցաւ ի վերին վանքս ի զրան սուրբ եւ աստուածունակ նշանիս ի յեղբայրութեան պատուական երկնակրան ձերուցոյ Յակոբայ եւ յայլ եղբայրս Յովաս. Յովակէի եւ Միխայիլ: Հրամանաւ կուսակրան քհ. Վազարու... (յիշել ինդրէ) եւ զառաջնորդ սուրբ ուխտիս գնալիկի յիշեցեալն զսէր Պետրոս, որ բազում բարութեանց ա- սիթ եղև սուրբ ուխտիս, որ եհատ զհարկից պահան- չունն յանաւրեանց եւ արար խաղաղութիւն մանկանց Սիսի...» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Թ. 86) :

⁴² «1352ին զրուած Աստուածաշունչի կցուած յի- շատակարանին մէջ կայ՝ «Եւ երկնահանգէս սուրբ ա- թոսոյն Վանայ եպիսկոպոսարանին, Վարազայ սուրբ Նշանին» (Լարայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 16) : Անկէ յառաջ 1329ին զրուած Աւետարանի մը մէջ գտնուած յիշատակարանին կ'իմանանք թէ Վա- րազի նուէր կը տրուի սուրբաբար մը (Լարայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 182) :

Ճաշոցի մը մէջ, որ 1393ին կ'աւարտի, Վարազի առաջնորդ կը յիշուին տէր Սահակ իր Պօղոս եղբոր հետ ի միասին (Նօտարք, էջ 2) : Այնպէս կը թուի թէ Սահակ նախա- պէս Պօղոսի օղնական եղած ըլլայ եւ սպա- անոր աթոռը, բարձրացած, վասն զի ձառըն- տիրի մը յիշատակարանին մէջ 1399ին կայ՝ «Գրեալ ի սուրբ ուխտն Վարազայ ձեռամբ Յովհաննէս գրչի ընդ հովանեաւ սուրբ Նշա- նին Վարազայ... ի հայրապետութեան տէր Սահակայ առաջնորդին Վարազայ եղբոր Տ. Պաւղոսի նախորդ առաջնորդին ի թվ. Հայոց ՊԽԸ⁴³» (Թորոս Աղբար, Բ., էջ 429 եւ Նօտարք, էջ 10) : Սահակի օրով Վարազի մէջ կը գրուի ձառընտիր մը (1401ին), որուն անտիպ յիշատակարանը յառաջ կը բերեմ : Անկէ կ'իմանանք թէ վանքին մէջ ծանր հի- ւանդութիւն մը մուտք գտած է եւ քանի մը հոգւոյ մահուան առիթ եղած՝

«Փառք... զոր տեսալ զայսպիսի դանձա աստուածային... պատուական կրանաւորն Հայրապետ եւ հոգեւոր եղբայր նորին Յովա- նէս միանակեաց... ստացան զսայ յիշատակ հոգոց իւրեանց եւ ծնաւդացն Հայրապետ կրանաւորի հաւրն Յակոբին եւ մաւրն Մա- րէմին եւ հանդուցեալ եղբուրն Ստեփաննո- սին... եւ Յովանէս միակեցի հաւրն Եղեւո- նին եւ մաւրն էլթանի, եւ քրւերն Դովլաթի ... յանձն առի եւ... կատարեցի ի դառն եւ ի վշտաբեր ժամանակիս որ ի բոլոր աշ- խարհս ի գերութեան եւ ի տար(տար)ոս ի ձեռն անաւր(էն) Ղանին Լանկթամուր... որ էր թիւս Հայոց ՊԾ : Այլ եւ զրեցաւ սայ ի գե- րահոգակ եւ յերկնահանգէս սուրբ ուխտս Վարազ ընդ հովանեաւ սուրբ Նշանիս եւ այլ սուրբ ուխտացս եւ յառաջնորդութեան եւ յեպիսկոպոսութեան տեղոյս տէր Սահա- կայ... : Եւ զպատուական կրանաւոր զՅա- կոր գուսուցանողն Հայրապետին եւ զհեղա- հոգի եւ զարբասէր կրանաւոր զԲարսեղ, որ ամենայն օրպիսութեամբ առիթ եւ պատճառ եղև այսմ բարի գործոյ խրատ տալով եւ գե- ղով... եւ զՄկրտիչ զեռարոյս կրանաւորն եւ զայլ աշխատողսն եւ զերախտաւորսն առ հասարակ ամէն : Ընդ նոսին եւ զիս զան- յիշելի գրբիս զԱւետիս եւ զիմ ծնաւդոն զՏղա- պարոն եւ զՀէլօք եւ զուսուցիչն իմ, զհո- գեւոր հայրն իմ եւ ըստ մարմնոյ զեղբայրն

⁴³ Կը յիշուի այս թուին Գեորգ Բարուսեպետ որ ձառընտիր մը գրութեան պատճառ կ'ըլլայ (հմմտ. Չարրհանէլեան, Պամ. հայ. գպրութեան, Բ., էջ 152) :

իմ զՂազար կրանաւորն եւ զհայրն իւր զԳրի- գոր... : Այլ եւ կրկին յիշման արժանի արա- րէք... զառաջին գրող սորա զՅովհաննէս քա- հանայ, որ յառաջն ժ. Թ. տետր գրեաց եւ տա- րածամ փոխեցաւ ի Գրիստոս... : Ընդ նո- սին եւ ես Յովհաննէս սուտանուն կրանաւոր ժ.Գ. տետր գրեցի :

Թղ. 24 ա. Թողուլ զմեզս... եւս առաւել ստացողի սուրբ գրոցս Հայրապետ կրօնաւո- րին եւ Յովանէսին եւ իւր ծնողացն եւ ինձ մեղաւոր գրողիս Յովանիսի եւ իմ ծնո- դացն... :

Թղ. 150 ա. Բրիստոս Աստուած... ողոր- մեա... ստացողաց սուրբ գրոցս Հայրապետ կրօնաւորին եւ Յովանիսին... եւ ինձ մեղա- ւոր գրողիս Աւետիսիս... նաեւ միւս գրողին Յովհաննէս քահանային, որ տարածամ մա- հուամբ փոխեցաւ ի Գրիստոս... :

Թղ. 158 բ. Եւ եղբուր իմ Ղազար կրա- նաւորին...

Թղ. 695 բ—696 ա. Անմեղազիւր լերուք ... կազմած էր ինչ գրեցի. բայց խրատ մահ կայր ի վանքս եւ ես եկի ի գասայտանէն. է երէց վախճանեալ էին եւ զվերջն Աստուած զիտէ... :

Թղ. 701 ա. ... Այսաւր Աւետիս պատա- նեակն փոխեցաւ առ Գրիստոս... մահկի ամոց Թ. եւ բազում կոծ եթող ծնողաց իւրոց» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 1524) :

Մէկ տարի վերջը՝ 1402ին կը յիշուի Անանիա Վարազեցի մը, որ խաչքար մը կը կանգնէ՝ «Ես Վարազեցի Անանիա վարդա- պետս կանգնեցի սուրբ Խաչս բարեխօս եղ- բորն իմոյ Եղիա կրօնաւորին, որք երկրպա- րանէք յիշեցէք ի Գրիստոս» (Նօտարք, էջ 16) :

Գուցէ Սահակին յաջորդն է Ատոմ, որ 1419ին կը յիշուի զովասանքով «սրբասէր եւ առաքինի վարուք եւ արի ի գործ սպասաւո- րութիւն (sic) եկեղեցւոյ» (Արարատ, 1914, էջ 1114—1116. հմմտ. նաեւ Չարրհանէլեան, Պատմ. հայ. գպրութեան, Բ., էջ 150) : Վա- րազի 1421ին ձառոց մը կը նուիրուի՝ «Ի յա- ւաջնորդութեան սուրբ ուխտին իմաստուն եւ հանճարեղ վարդապետին Մարգարայ կո- չեցեալ, այլ եւ յեպիսկոպոսութեան տեղոյն սրբանեալ եպիսկոպոսացն տէր Յովանիսի եւ Ատոմայ : Ի թուականս Հայոց ՊՀ. ամի» (Նօտարք, էջ 67) : Նոյն թուականին աւետա- րան մը կը գրուի՝ «Ի հայրապետութեան

Տեանն Պօղոսի եւ մերոյ աթոռակալի եւ ա- նաջնորդի սուրբ ուխտիս Վարազայ քաջ հոգեւորի եւ տիեղերալոյս վարդապետին Մարգարէի եւ տէր Յովհաննէս եպիսկոպոսի, ի քաղաքս որ կոչի Վան» (Նօտարք, էջ 65— 66. Լարայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 340) : Նմանապէս նոյն թուականին Կա- րապետ կը գրէ աւետարան մը՝ «Ի հայրապե- տութեան տեսնն Պօղոսի եւ մերոյ աթոռա- կալի Մարգարէ վարդապետի եւ տէր Յովհան- նէս եպիսկոպոսի առաջնորդացս ուխտին Վարազայ» (Նօտարք, էջ 65) : Ինչպէս կը տեսնուի վերջին երկու յիշատակարաններու մէջ Ատոմի անունը լուծած է, հաւանօրէն 1421ին մեռած է եւ միւսները մնացած են Վանի ու Վարազի առաջնորդ : Հետեւեալ յի- շատակարանին մէջ եւս Ատոմի յիշատակու- թիւնը չենք տեսներ եւ զարձեալ Յովհաննէս ու Մարգար յիշատակուած են : Այս կա- րելոր յիշատակարանին բովանդակութիւն է՝ (հմմտ. Կարինեան, Յուց. Թ. 178) :

«Փառք... Արդ... ցանկացող եղեալ եր- ջանիկ ոմն կրօնաւոր եւ աստուածեղէն ճիւղն բարգաւաճեալ որոյ անուն Սողաթիէլ ճա- նաչի եւ ելեալ ի ինդիր... աստուածունակ տառիս... ետ զձագրել զսա յոյժ փափագա- նաւք բազում զձագրողաց ի հալալ արդեանց իւրոց : Որ եւ վասն առաւել ջերմեռանդ սի- րոյն, զոր ունէր առ Աստուած եւ վասն չքա- ւորութեան իւրոյ զմեծ մասն գրոցս իւրով իսկ ձեռամբն զձագրեաց ի մեծահոգակ եւ յաստուածարնակ եւ յաղանաւոր եւ յերեւելի եւ ի մայրաքաղաքն ամենայն վանօրէից ի Վարազ վանքն, ընդ հովանեաւ սուրբ Աս- տուածածնին եւ այլ բազմահաւաք սրբոցն որ անդ կան հաւաքեալ եւ ստացաւ... ի վայե- լումն անձին իւրոյ... եւ յիշատակ հօրն իւրոյ Ամիր բէկին եւ մօրն Խելօքին եւ եղբորն Մկրտչին եւ քրերն Փաշամելիքին եւ հօրեղ- բորն Սէթին... : Այլ եւ զգձագրողք այսմ աստուածաշունչ կտակիս նախ եւ առաջին զՅովհաննէս պատուական վարդապետն մա- կանուն Մոնթ կոչեցեալ, որ պատճառ եւ սկիզբն զձագրութեան... եղեալ եւ զԽաչա- ստոր քահանայն եւ զԿարապետ քահանայն... եւ զձնոյն նոցին յիշեցէք... ընդ նոսին եւ զիս... զանարհետ սոսկանուն արեղայս թումա, որ ես արժանի եղէ սակաւ ինչ աշ- խատութեան զձագրելով զերկրորդ օրէնքն ի տառս յայս մեղսամած մատամբ իմով եւ զյիշատակարան գրոցս եւ կազմեցի զսա ըստ

կարի փանաքիմաց զիտուլեան խոյ... Աւարտեցաւ եւ կազմեցաւ զերբն այս ի թուաբերութեան հայկազեան տումարի ի ՊՂ. յատուածաբանամ կղզիս Աղթամար ընդ հովանեաւ գերահոջակ սուրբ Խաչին եւ սուրբ Աստուածածնին ի հայրապետութեան տեան Դաւթի... :

Այլ գրով. Յայտ ամի եղեւ զբաւ սորա որ էր թիւս Հայոց ՊՂԱ ի պարտութիւն իզգինչերին եւ որդւոյ նորին Մէլէքին: Գրեցաւ զերբն հոգեկից ի դաւառս Տոգր կոչեցեալ ի սուրբ մենաստանիս Վարակը կոչեցեալ ընդ հովանեաւ կենսառու սուրբ Նշանիս եւ յերկտասան սիւն լուսոյս եւ սուրբ Աստուածածնիս եւ Նախալկայիս եւ սուրբ Յովհաննէս Աւետարանչիս եւ գերազանձ սրբոյ Սիոնիս եւ սուրբ Սոփիայ: Եւ յառաջնորդութիւն տիեզերալոյս բարունակատիս Մարգարէ քաջ հոգեւորի եւ իմաստասիրի: Ի հայրապետութեան արքեպիսկոպոսիս տէր Յովանիսի, որ սիրող եւ ինամածու եղեւ մեզ... սա եղեւ պատճառ զրոցս որ Ժ. տետր ետուր եւ դաւրինակն շնորհեաց, Ռ. պատիկ առցէ ի հանդերձեալն: Ես պիտակ անուն վարդապետ Սաղաթիէլ առ ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց... :

(Թ. գ. 104 ա). Յամի Պ. եւ Հ. եւ Ա. թվականութեան Հայկազեան տումարիս զճարեցաւ զերս երկրորդում օրինացս ի կղզիս Աղթամար ձեռամբ Թումայի անարժանի ի ինդրոյ սրբասէր արեղային Սաղաթիէլ» (Ա. կինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 207, Աստուածաշունչ. հմմտ. Նոտարք, էջ 64):

Մարգար առաջնորդը Գրիգոր Տաթևացոյն աշակերտած է եւ շատ ուսեալ եւ կարող անձ եղած եւ զրուատիքներու դարնեայ պատկին արժանացած (Թովմ. Մեծոփ., էջ 52): Իսկ Յովհաննէս եպիսկոպոս Մարգարէն աւելի երկարակեաց եղած է, ինչպէս պիտի տեսնուի:

Վերին Վարազ 1425ին կը բերուի գերուած Նարեկ մը, զոր Խօջայ Աստուածատուր կը գնէ (Թօփճեան, Յուց. Դադ. վրդ., էջ 55): Իսկ սաս տարի 44 վերջ (1435ին) կը գրուի Աւետարան մը՝ «Ի հայրապետութեան... մերոյ առաջնորդի եւ աթոռակալի սուրբ

44 1431ին Կարապետ՝ «Սպասաւոր սուրբ ուխտին Վարազայ Բաղէշ կու գայ եւ կը ստանայ Գրիգոր Տաթևացոյ մէկ գործը» (Արձագանք, 1885, էջ 123): 1438ին Չարսիայի ձեռքով Վազար վարդապետի համար կը գնուի Տօնացոյց մը (Ա. կինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ., Տօնացոյց ԽԵ):

ուխտիս Վարազայ տէր Յովհաննէս արքեպիսկոպոսի ի քաղաքիս որ Վան կոչի» (Նոտարք, էջ 106. Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 369): Սոյն Յովհաննէս կը մասնակցի Կիրակոս Խորվիրապետին կաթողիկոսական ընտրութեան (Մեծոփ. Յիշատակարան, էջ 52—53 եւ 76, Առ. Դաւ., էջ 418): Նմանապէս Չարսիա կամ Չարարէ վարդապետ «Վարազայ մայրաքաղաք Վանօրէից» նոյն ծրագիրը կը հետապնդէ (Թովմ. Մեծոփ., էջ 52. Դիւան, Ժ., էջ 47. Նոտարք, էջ 122): Սա անոր գործակիցն էր:

Յովհաննէսի օրով կ'ըլլան բաւական արտադրութիւններ Ձեռագիրներու. 1442ին՝ կ'աւարտի Յայամաւորք մը (Առ. Դաւ., էջ 418). 1444ին՝ վարդան կը գրէ Աւետարան մը (Ա. կինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 1261). 1445ին՝ կը գրուի Յայամաւորք մը (Նոտարք, էջ 146): 1446ին՝ կ'աւարտի Յայամաւորք մը «եւ մերոյս առաջնորդի սուրբ ուխտիս Վարազայ Յովհաննէս եպիսկոպոսի եւ Չարարիս վարդապետի. 1448ին՝ կը գրուի զանձարան մը «ի հայրապետութեան» մերոյ առաջնորդիս սուրբ ուխտիս Վարազայ Տէր Յովհաննէս եպիսկոպոսի եւ Մարգարայ վարդապետի 45 ձեռամբ Խաչատուր երիցու» (Նոտարք, էջ 158). 1452ին՝ կ'արտադրուի Աւետարան մը «Ի Վան ձեռամբ յոգնամեզ եւ անարժան սուտ անուն Վարդան երիցու... ի հայրապետութեան Տեան Գրիգորի եւ մերոյ աթոռակալի սուրբ ուխտիս Վարազայ հեղահոյի եպիսկոպոսին տէր Յովանիսի եւ Չարարիս վարդապետի» (Նոտարք, էջ 169): Նոյն Յովհաննէս կը յիշատակուի 1453ին (հմմտ. Նոտարք, էջ 171 եւ Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 137) եւ 1454ին (հմմտ. եւ Նոտարք, էջ 175): Այս թուականին արտադրուած Կաթողիկէ թղթերու մեկնութեան յիշատակարանին մէջ կը յիշուին Վարազայ առաջնորդներն ու միաբաններէն՝ «Եւ ընծայեաց (զմատեանն) Վարազայ սուրբ հրաշագործ եւ աստուածընկալ սուրբ Նշանին ի զրուսն եօթնասիւն Լուսոյ, որ է հրեշտակարնակ տեղի եւ աստուածունակ Անպատ: Որք են անդ հաւաքեալ այժմ բազմութիւն անձանց կրօնաւորաց: Արդ ես Կիրակոս արեղայս յերես անկեալ պաղատիմ կողկողագին եւ յորդարուղիս

45 Յակոբ Թօփուզեանի Պատմութեան համեմատ Մարգար 1464ին գեռ Վարազի առաջնորդ էր (Նոտարք, էջ 218):

արտասուօք, որք հանդիպիք այժմ աստուածային Բուրաստանիս յիշեցէք առաջին անմահ դառին Աստուծոյ եւ մեղաց թողութիւն ինդրեցէք ինձ եւ հարց եւ եղբարց իմոց: Նաեւ հոգեւոր հարց եւ եղբարց իմոց Յովհաննէս եպիսկոպոսին (առաջնորդին Վարազայ) եւ Չարարիս վարդապետին, Յովհաննէս կրօնաւորին, հերպետ (վերակացու ուխտին կամ փոխ-վանահայր) Հայրապետին, Մեղքիսէթ կրօնաւորին, Թաղէոս ճգնաւորին, Ահարոնին, Կարապետին, միւս Կարապետին, Աստմին 46 (Բեմբասաց ի վանահայրութեան Կարապետ արքեպիսկոպոսի), Դաւթին, Մկրտչին եւ միւս Մկրտչին, Գրիգորին, Կարապետին, մահտասի Յովաննիսին, Սուքիասին, Ստեփաննոսին, միւս Ստեփաննոսին եւ Յակոբ միակեցին...: Չանարժան զծոցս Իգնատիոս արեղայս աղաչեմ յիշել ի Տէր» (Նոտարք, էջ 175—176):

Յովհաննէսի առաջնորդութիւնը շատ երկարատեւ կ'ըլլայ եւ իրեն յաջորդ կ'ունենայ համանուն մը՝ Յովհաննէս: Ամէն պարագային նա է որ գեռ կը յիշատակուի 1458ին (Թորոս Աղբար, Բ., էջ 479, տպուած կամ գրուած՝ Յովսէփ. հմմտ. Նոտարք, էջ 188), 1462ին (Ա. կինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Հ. Մ. Պոտուրեանէ), 1463ին (Բարխուդարեան, Արցախ, էջ 267) եւ 1465ին (Նոտարք, էջ 202): Այս վերջին թուականիս գրուած Յայամաւորքի մը յիշատակարանին մէջ կայ՝ «Ի կաթողիկոսութեան Տեան մէջ կայ՝ «Ի կաթողիկոսութեան Տեանն առաջնորդին Վարազայ Տէր Յովանիսին մեծին (եւ Տէր Յովհաննիսի) փոքուն»: Այս յիշատակագրութիւնը նկատելով չէ կարելի ստուգութեամբ ըսել թէ 1467ին յիշուած «Տէր Յովհաննէս եպիսկոպոս»ը ասոնցմէ ո՞րն է (Նոտարք, էջ 232): Սակայն բոլորովին ստուգապէս կարելի է ըսել որ 1486ին յիշուած Յովհաննէս արքեպիսկոպոսն իր յաջորդն է, վասն զի ինքը արդէն մեռած էր խոր ծերութեան մէջ. «Աւարտեցաւ... ի գեաղն Սղոյայ (Գանձարան մը) ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ Փրկչին ի թվ. ՁԼԵ (1486) յառաջնորդութեան սուրբ ուխտիս Վարազայ տէր Յովհաննէս արքեպիսկոպոսի, սրբական Տէր Եւ հեղահոյի, որ զլասս կրանաւորաց սիրուի կու յարմարէ եւ աշխատաւորացս եւ բով կու յարմարէ եւ աշխատաւորացս եւ վաստակաւորացս վերակացու լինի (Տէր

46 Ասոմ տպագրաց էր (հմմտ. Արարատ, 1902, էջ 447—451):

Աւետիսեան, Յուց. հայ. Ձեռ. Նոր-Ձուղայի 290. հմմտ. Սղոյայ Ս. Աստուածածնի վանք, ուր եւ յիշատակութիւն մը 1487ին):

Յովհաննէսին յաջորդն է Ասոմ, որ կանխաւ Վարազի «հէրպետն» էր:

Չենք կրնար ըսել թէ Ասոմ ե'րբ առաջնորդութեան պաշտօնին կոչուեցաւ 47: Սակայն այն ստոյգ է որ 1507ին նա արդէն առաջնորդ էր: Այդ թուականին Չարարիս Վարազի մէջ Շարակինոց մը կ'աւարտէ (Conybeare, Cat. Brit. Mus., Թ. 49, էջ 107. հմմտ. նաեւ Ա. կինեան Հ. Ն., Գաւազանագիրք, էջ 124): Չարարիայէն յառաջ «ասոտս Վարազայ սուրբ Նշանին» Յովհաննէս Մանգասարենց կ'արտադրէ Յովհաննու Աւետարանը (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 618—620):

Ասոմին յաջորդ յիշատակուած է Կարապետ արքեպիսկոպոս, որ իրեն օգնական ունեցեր է Գրիգոր վարդապետ: Չարարիա արեղան 1511ին Աւետարան մը կը գրէ՝ «Ի հայրապետութեան Տեան Սարգիս կաթողիկոսի եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս Վարազայ Կարապետ արքեպիսկոպոսին եւ Գրիգոր վարդապետին եւ ի եռանութեան (իշխանութեան) յաղթող իշխանին Շահ Իսմայէլին» 48: Սոյն Կարապետն ըլլալու է որ իբրեւ «սպասաւոր սուրբ ուխտին Վարազայ» 1521ին Բաղէշի մէջ խօժայ Միքայէլի մօտ գտնելով Գրիգոր Տաթևացիին Սաղմոսաց մեկնութիւնը կը ստանայ զայն (Արձագանք, 1885, էջ 123. հմմտ. Թօփճեան, Յուց. հայ. Ձեռ. Դաղեան Վրդ. Վ., էջ 62): Հ. Ն. Ա. կինեանի համաձայն այս Կարապետ սպասաւորը նոյն է Կարապետ արեղայի հետ, որ ԶԿԲ. թուին ելլելով «ի զրանէն Վարազայ սուրբ Նշանին» կ'անցնի էջմիածին «ի ծառայութիւն տիեզերալոյս վարդապետին Դուկասի» (Հանդ. Ամս., 1937, էջ 321—322):

Կարապետի առաջնորդութեան վերջին տարին անձանօթ է: Վանի մէջ 1533ին կը գրուի Աւետարան մը՝ «Ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս... (երկու բառեր քերուած, գուցէ ըլլային՝ Վարազայ Կարապետ) արհե-

47 Հմմտ. Աղբար. Հանդ., 1911, էջ 70:
48 Թօփճեան, Յուց. հայ. Ձեռ. Դաղեան Վրդ. Վ., Ա., էջ 8, ուր կարդացուեր է եձԿ = 1111, սակայն նկատելով որ Սարգիս Գ. Միւսայլ կաթողիկոսի գահակալութեան շրջանն է 1484—1515 եւ Շահ Իսմայէլի կառավարութեան տարիներն են 1505—1525 պէտք է եձԿ սրբագրել ԶձԿ = 960 + 551 = 1511: — Աւագ Տիկերը 1515ին կը միաբանի «ի հոշակաւոր եւ ի մեծ սուրբ ուխտիս Վարազ» եւ կը նորոգէ Աւետարան մը (հմմտ. վերը կամ Սարգիսեան, Մայր ցույց., էջ 390):

պիսկոպոսի եւ Յովհաննէս եւ Կարապետ վարդապետացս եւ Գրիգոր Հերպետի (Մարգրիտեան, Մայր Յուլիան, էջ 718): Հաւանութեն յաջորդ տարին՝ 1534ին Վարդգի մէջ կը գրուի Մաշտոց մը (Տաշեան, Մայր Յուլիան, էջ 433—434):

Այս ատեն Վասպուրականն ու անոր հետ նաեւ Վարազ կողոպուտի եւ աւերի կ'ենթարկուի: Ասպատակոզն էր Շահ Թահմասպ Ա.: Բայց բարեբաւաստէն Վարազ շուտով կը վերականգնուի եւ փթթումի նոր շրջան մը կը բուրդէ: Հոն կը ծաղկի Զաքարիա երգասացը, որ Գրիգոր Վարազեցիին տեղեկատուութեան համաձայն Վարազով զիւթուած կ'երգէ «չքնաղ երգ»ը «ԶՎարազն ասեմ» (Դիւան, Ժ., էջ 501): Հոն կը ծաղկի Կարապետ Զաղ, որ երբ կ'իմանայ թէ իր զբոսը կ'աւերուի իր եղբորը ինքնին ալ գերած են՝ Վարազի լեռնէն իջնալով Զուղայ եւ Սպահան կ'անցնի: Վերջին քաղաքին մէջ կը մեռնի ու կը թաղուի: Բայց իր Մարտիրոս աշակերտը հակառակ գերեզմանին խիստ հսկողութեանը կը յաջողի մարմինը գողնալու եւ Վարազ փոխադրելու (Ալիշան, Հայագատում, Բ., էջ 322): Կարապետին աշակերտներէն է նաեւ Պօղոս Մոկացին, որ քարոզչական լայն գործունէութիւն ունեցեր է եւ չէ ընկրկած հալածանքի ու տառապանքի տակ (Առ. Դաւրիթ, էջ 266—283): Հոն կը ծաղկի Ներսէս կրօնաւոր Վարազեցին, որ Գանձարան մը կը նորոգէ (1548ին, Աճառեան, Յուլ. հայ. Ձեռ. Սահասարեան վարժարանի, Վիեննա 1900, էջ 25): Համանուն Ներսէս եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ 1559ին Յովհաննէս կ'արտադրէ Աւետարան մը (Մատ. Ն., Յուլ. համառոտ հայ. Ձեռ. վանուց Սեւանայ, Մոսկուա 1892, էջ 4 ուր գրուած է «ի գերահոգակ ուխտիս Մարտայ» որ հիմնարկեալ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին... գոր կարգալու է «Վարազայ»: հմմտ. Սմբատեան, Գեղարքունիք, էջ 397):

Այս շրջաններուն⁴⁹ Վարազայ առաջնորդներուն շարքին մէջ փայլուն դերք կը գրուի Մարգար, որ արդէն 1565ին կը յիշատակուի: Նա դահ կը բարձրանայ իբրեւ յաջորդ Սահակ արքեպիսկոպոսի, որուն եղբորդին է յիշատակուած Զաքարիա երգասացը (հմմտ. վերը եւ Դիւան, Ժ., էջ 501): Մարգար կը գնահատուի իբրեւ «հեղ եւ հանդարտ յաջս

⁴⁹ 1581ին սկսած Վարազի մէջ իր արտաքին եւ գրական գործունէութեամբ հռչակ կը հանէ Վարա-

ամենին» (հմմտ. Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 666): Մարգարի առաջնորդութիւնը կարճատեւ չըլլար, նա կը յիշուի դեռ 1595ին (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 34 եւ 745):

Սակայն այնպէս կը թուի թէ ծերութեան պատճառով հրաժարած ըլլայ գործերէն, բայց ոչ տիտղոսէն եւ կամ պիտի ըսենք թէ 1595ին իր յիշատակութիւնը սխալմունք է: Վասն զի 1599ին Մարգարին տեղ նոյն պաշտօնի վրայ կը գտնենք Ստեփանոս արքեպիսկոպոս եւ Կարապետ, ինչպէս Բարսեղի յիշատակարանէն կ'իմանանք: Սոյն յիշատակարանն իր կարեւոր բովանդակութեան համար յառաջ կը բերեմ հոս (հատընտիր):

«Փառք... Գրեցաւ սա (աւետարանս) ի թուարեութեանս Հայոց ՌԹ (1591) ի հայրապետութեան տեանս Մէլքիսէդէ եւ մերոյ աթոռակալի եւ առաջնորդի սուրբ ուխտիս Վարազայ Ստեփաննոսի եւ Կարապետ վարդապետի ի մայրաքաղաքս վանորէկցս ի Վարազ ընդ հովանեաւ Ս. Նշանին ձեռամբ անարժան եւ սուտանուն արեղայի Բարսեղի անարհեստ գրչի...: Յիշեցէք յաղաւթս ձեր... եւ գհոգեւոր հայրն եւ գրեովն իմ գիտարապետ բարունապետ փելիստօփայն, մականուն Զամալն, այլ եւ զաշակերտսն մեր... զտէր Զաքարէն, զտէր Յովհաննէսն, զտէր Ներսէսն, զՂազար Սարկաւազն, զանտեան Կակոսն, որ աշխատեցան ի կոկել թղթին եւ զտէր Փիլիպպոս վարդապետ, որ կաղմեաց զսուրբ աւետարան...: Աստուած ողորմի սասցէք խուս Սարգսին, որ բազում աշխատանք ունի սուրբ եկեղեցեաց վերայ, որ երբըր գեկեղեցւոյ դրանդին եւ եղեւ պատճառ որ դոներն ամէն քարէ շինեցին, զերկու եկեղեցւոյ սալարս, զերկու ժամարան, զերկու խորանն, զսան քարերն, զղաթարի քարերն,

զեցին Բարսեղ (հմմտ. Դիւան, Ժ., էջ Թ—ԼԳ եւ 502): Մեր Մատենադարանին Թ. 663 Տաղարանին մէջ թղ. 12 ա. Առաքել վարդապետի Պղտուլի եւ Վարդի տաղէն (Ականջ գրէք) վերջ կայ՝ «Մեղաք լցեալ Բարսեղ Վարազեցի, որ զպս քանի տողերս շարադրեցի, ով որ ասէ բերան մ'ինձ ողորմի, երկնից արքայութեան ժառանգ լիցի: Ականջ գրէք զերոյս ձեզ զանգատ ունի, զքաղքի կերակուրն որ փշրուի լինի, ամսոս աղուոր աշերս լուսոյ կու պահիս, մեղք ու մատակն ի փանեց վրէն»: — Այս դարուն անուն կը հանն նաեւ Գրիգոր Վանեցի կամ Վարազեցի եպիսկոպոսը (Աղաւնունի, Միտրանք եւ այցելուք հայ երուսաղէմի, էջ 73) եւ Յովհաննէս հանձարեղ եւ գրահետ» վարդապետ (Դիւան, Ժ., էջ 502): — 1311ին գրուած Աւետարանի մը յիշատակագրութիւններէն մէկուն մէջ կը մտնուի յիշել թուժա Վարազեցի եպիսկոպոսը (Աճառեան, Յուլ. հայ. Ձեռ. Թարգիզի, էջ 71):

որ յառաջ չկայր նոր արարին...: Դարձեալ յիշեցէք... զպարոն Հէրապետն, որ եղեւ պատճառ վերստին նորոգման սուրբ եկեղեցեացն եւ զերկու ժամատուն ի հիմանց նոր շինեցին, զխցերն եւ զերեսքացներն, զՎարոցն, զՄկրտիչն, զՄէլքիք Բարուրն...» (Յիշատակարան Բարսեղ Վարազեցիի, Դիւան, Ժ., էջ 33—38. հմմտ. նաեւ Սմբատեան, Ներնալ, էջ 261—262. Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 719): — Ասոր կը կցեմ յաջորդ յիշատակարանն ալ՝

«Փառք քեզ հայր եւ որդի եւ սուրբ հոգի... Եւ արդ՝ ես յետնեալս յամենայն բարեաց եւ յանարժանս յուխտէ եկեղեցւոյ Աւետիս քահանայ՝ եւ ոչ գործովք... զոր վստահացեալ յօղնականութիւն հոգւոյ սրբոյ ձեռնարկեալ զրեցի զսա ի սուրբ ուխտս որ կոչի Վարազ ընդ հովանեաւ Կենսատու Սահակի Քրիստոսի. ի թուականիս Հայոց ՌԹԱ (1602) ամին. ի յառաջնորդութեան սուրբ ուխտին Վարազայ տէր Ստեփաննոս արքեպիսկոպոսին. եւ ի զաստուրութիւն տէր Բարսեղ վարդապետին. որ զկէս գրոցս գրեւ էր. զքաղցրաձայն երաժիշտն. զբանաստոր ծիծեռն. Աստուած զինքն անսայթաքելի պահեցէ ի պարծանս մեր: Եւ զիս զանարժան զտէր Աւետիս Մոկացիս՝ որ զկէս գրոցս զրեցի եւ աւարտեցի ի քաղաքս Վան. ընդ հովանեաւ Տիրամայր սուրբ Աստուածածին, եւ Գարրիէլ հրեշտակապետին, որ է պահապան քրիստոնէից: Աղաչեմ անմեղադիր լեւուք սխալանաց եւ խոչորութեան զրեւ՝ եւ պակասութեան արհեստից՝ զի կար մեր այս էր. եւ էր ժամանակս զան ի ձեռաց այլազգաց... Եւ արդ՝ ես պարոն Միլիամս ստացայ զսուրբ զիւրք... եւ եղի յիշատակ ի գրանս Կենդանանից սուրբ Աստուածածին... եւ զՅովհաննէս եպիսկոպոսն Վարազեցի՝ որ զօրինակ շնորհեաց... Եւ զԲարսեղ զձոյ Վարազեցին, որ զժգ տետր ձառքս զրեցի ըստ կարի իմում. եւ Աստուած ողորմի ասացէք ինձ եւ ծնողաց իմոց Ստեփաննոսին եւ խաթուն Բէկիլմանին. եւ քեռուն իմոյ Կարապետ բարունապետ փելիստօփային. մականուն Զամալ Արարեցուն. եւ միւս քեռուն տէր Յովհաննէս քարտուղարին... Եւ զտէր Ստեփաննոս զառաջնորդ սուրբ ուխտիս Վարազայ, եւ զմիտրանսն առ հասարակ. եւ զտէր Գրեցաւ ի ՌԹԱ (1602) թուականին Հայոց, ի վրդովման ժամանակիս, որ այլազգիքն կու

կոտորեն զմիմեանս. ըստ այնմ որ հրամայէ սուրբ աւետարան թէ յարեցէ ազգ ի վերայ ազգի, յորոց փրկեցէ զմեզ Քրիստոս Աստուած» (Դիւան, Ժ., էջ Լ—ԼԱ):

1594ին՝ «ի յիշատակ Կարապետ վարդապետի կը գրուի Ստեփանեցի պատմութիւնը, զոր անիկա» տայ յիշատակ Վարազայ Ս. Նշանին» (Ալիշան շ. Ն., Հաւաք. Յիշատ. շ. Պոստերեանէ):

Յիշատակարանի մը համեմատ այնպէս կը թուի թէ 1595ին Ստեփանոս առաջնորդ մեռած ըլլայ (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 745), մինչ Բարսեղ Վարազեցի զինքը 1602ին⁵⁰ զեռ կենդանի գիտէ (հմմտ. վերը): Հաւանութեն այս Ստեփաննոսին է՝ «Աշունն էր եղաւ գարուն, ցամաքեցաւ ձիւնն սարերուն» տաղը (հմմտ. Սրուանձտեանց, Մանանայ, էջ 264 եւ Հայերդ, էջ 129): «Դարձեալ տաղ նորին Ստեփանոսի: Եղբայրք շատ բարեւ լալով, յաշխարհիս սնց կայք դուք բարով» (Ոսկեան շ. շ., Մայր Յուլ. հայ. Ձեռ. Միւթ. Մատ. ի Վիեննա, Բ. անտիպ, էջ 151. կը գտնուի Թ. 663 Ձեռագրին մէջ թղ. 41 ա):

Ստեփանոսի արժանաւոր յաջորդն է Մարտիրոս, որմէ յառաջ կարճ ժամանակով մը Վանի առաջնորդ եղած է Զաքարիա Վանեցին, որ կաթողիկէական ըլլալուն աթոռն կը զրկուի եւ որ սակայն ետքն Կ. Պոլսոյ Պատրիարկ կ'ըլլայ (Բիւզանդիոն, 1902, Թ. 1930): Մարտիրոսի խնդրանքով կը գրուի Աստուածաշունչ մը (Զարբհանէլեան Մատենադարան, էջ 155) եւ 1617ին Աւետարան մը (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 853):

Մարտիրոս⁵¹ շատ մեծ գործունէութիւն ցուցած է ինչպէս Վարազի մէջ, նաեւ երուսաղէմի Ս. Յակոբայ պարտքերու թեթեւացման համար (Բարսեղ Բաղիշեցւոյ հետ) եւ երկու անգամ այցելած է Երուսաղէմ: Կը հիւրընկալէ տէր Կիրակոս Տրապիզոնցի ճգնաւորը Վարազի մէջ: Ըրած է՝ «բազում ուղղութիւնս եւ շատ բարութիւնս» (հմմտ. Գր. Դարանաղոց, ժամանակագրութիւն, էջ 324—325. հմմտ. եւ 373—375, Հայագա-

⁵⁰ 1600ին աւետարան մը կը գրուի Ստեփանոսի օրով (Ալիշան շ. Ն., Հաւաք. Յիշատ., 1600): — 1608ին Բարսեղ Աւետարանի մը յիշատակարանին մէջ կը յիշէ Ներսէս Վարազեցի (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ. էջ 256):

⁵¹ Նա կոչուած է Արահու կամ Արահույ. տե՛ս Գր. Դարանաղոցի, ժամանակագրութիւն, էջ 325. հմմտ. նաեւ Ընծայեաց Ս. Աստուածածնի վանքը:

գրան, տէր Ովանէսն, տէր Կարապետն: Այս եղև թղթն ՌՃՀԳ (1724) ամին⁶⁰, տեղապահութեան վարչի Ազգայն փաշին եւ օգնութեամբ վանայ քաղաքի եւ գիւղորէից օրհնեալ ժողովրդեան եւ պարտ է տեսողացն վայելել եւ ողորմիս ասել յամենայն ժամ ամէն» (Ազգր. Հանդ., 1911, էջ 64. հմմտ. եւ Գիւան, Ժ., էջ 156):

Բարթեղիմէոսի յաջորդն է Յովանէս «քաջ բարուն վարդապետ»ն, որուն օրով Կարապետ կը գրէ Աւետարան մը (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. վաստ., էջ 1039): Մինաս գրիչը 1739ին շատ դովեստով կը խօսի Յովհաննէսի գործունէութեան եւ վարազի նկատմամբ՝

«Ղազարիս հեղինակի
Որ եւ փայլէ նա քան զարփի,
Եւ վարազայ մեծ աթոռի
Արեամբ ներկեալ սուրբ Նշանի,
Ի Յովանէս վարդապետին
Որ զարդարեալ է զսուրբ ուխտս կրկին,
Միաբանեօք ժամատեօք
է յոյժ պայծառ եւ դովելի
Ձի է ի վերայ ճանապարհի
Մարաց ազգի, հայ եւ թուրքի
Ձի օր լինի որ հինգ հարիւր
Եւ օր լինի յորեկան մի,
Աստ ի հիւր դան երկվարօք
Ամէնրն թուրք եւ այլազգի
Ուան մանրեն, այլ եւ տանին,
Առաւելու եւ ոչ նուազի
Որ եւ Քրիստոս ի թիկունս հասցի
Մեր առաջնորդ վարդապետին,
Որ զսուրբ ուխտս այս չէն պահեցէ
Ձի է պարծանք Հայոց ազգին»:

(Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. վաստ., էջ 1042:)

Յովհաննիսի աթոռակից ու յաջորդ եղած է Սամուէլ վարդապետը (Ազգր. Հանդ., 1911, էջ 73): Այս առաջնորդ ընտրուած կը տեսնենք Գրիգոր եպ. Ճունճունիանց⁶¹, որուն օրով 1754ին Ձեռագրի մը յիշատակարանը կը գրուի եւ նա կ'որակուի «հանճարեղ

⁶⁰ 1716ին «ձեռնագրեցաւ տէր Պօղոս քահանայ ի գուն Տիրամայր եկեղեցւոյ ձեռամբ Բարդուղիմէոս վարդապետին, որ է սպասուոր վարազայ սուրբ Նշանին» (Գիւան, Ժ., էջ 156):

⁶¹ Սիմէոն կաթ. Գրիգորին կը գրէ Գիւր շնորհակալութեան (Գիւան, Բ., էջ 70), իսկ Յովհաննէս Մոկացին անոր բաղձանքին ընդատաշելով կը հիւսկ վարազի մասին գեղեցիկ ու գրուատալից ներբողեան մը (տե՛ս վերը):

վարդապետ» (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. վաստ., էջ 278): Անիկա 1755ի մահ տարածամի առիթով կը բանայ «մեծ սուրբ Նշանն տէրունական» եւ վանի Տիրամայր եկեղեցիէն Ս. Նշանը կը փոխադրէ նոյն քաղաքին էջմիածին եկեղեցին (Ազգր. Հանդ., 1911, էջ 73 եւ Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. վաստ., էջ 406): Վարազի մէջ անոր համար կայ խաչքար մը՝ «Վանդնեցաւ սուրբ Խաչս բարեխօս առ Աստուած վասն փրկութեան հողոյ Գրիգոր վարդապետին, որ էր... աւազ սուրբ Նշանին վարազայ թվ. ՌՄԺԸ (=1769) Նոյեմբերի ի տօնի Հրեշտակապետին» (Ազգր. Հանդ., 1911, էջ 67. հմմտ. Սրուանձտեանց, Մանանայ, էջ 393):

Գրիգորին յաջորդը կ'ըլլայ Բաղդասար, որ շինարար վանահայր մըն է ինչպէս ծանօթ է Ս. Գէորդի սա արձանագրութենէն՝

«Եւ շնորհօք սրբոյ Խաչին
Եղև ծագկեալ գաւիթ սորին
Եւ շրջապատրս պարսպին
Համայնգամայն բոլորովին
Նորոգեցաւ ի զարդ ամին
Ի ՌՄԻՁ թուականին
Ի Սեպտեմբեր ամսոյ մէկին
էջմիածնի նուիրակին
Տեսոն Բաղդասար վարդապետին
Ողորմութեամբ իշխանաց քաղաքին
Գերապատուացն ամենեւին»:

(Ազգր. Հանդ., 1911, էջ 64:)

1775ին՝ «Ի դիտապետութեան սուրբ ուխտիս (Վարազայ) Տեսոն Բաղդասար արքեպիսկոպոսին եւ արաջնորդ եւ նիւիրակ աստուածապահ(հ) քաղաքին Վանայ» Գէորդ Նուզազ կը գրէ Մեկնութիւն ԺԲ. Մարդարէից (Մատեան, Յուց. հայ. Ձեռ. Թարիւղի, էջ 18): Ասկէ յառաջ 1772ին Վարազի մէջ կը գրուի Պրոկղի Աստուածարանութեան շաղկապաց մեկնութիւնը (Կարինեան, Յուց. հայ. Ձեռ. էջմ. Թ. » . հմմտ. Հ. Յ. Տաշեան, Մատենադրական մանր Ուսումնասիրութիւնք, Վիեննա 1895, էջ 33):

ԺԹ. դարու սկիզբը⁶² Վարազայ վանահայր կը գտնենք Յարութիւն Բաղիշեցի, որ 1808ին խաչքարի մը վրայ կը յիշուի՝ «սուրբ Խաչս բարեխօս է առ Աստուած վասն փրկութեան»

⁶² 1792ին Հոսթի մէջ կը մեռնի Արեքսանդր Ասլանեան, միաբան Աղթամարի եւ արքեպիսկոպոս Վանի (հմմտ. Գալէմբեարեան, Կենսագրութիւն Սարգիս Սարգիսեանի, էջ 380—382):

թեան հողոյ արքեպիսկոպոսի Յարութիւն վարդապետին, որ է տէր քաղաքին թվ. ՌՄԾԷ (1808)»⁶³ (Ազգր. Հանդ., 1911, էջ 67 եւ 73: 1803ին կը յիշատակուի տէր Ղազար որ դարպասի պարիսպը կը նորոգէ՝ «Ի թվին ՌՄԾԲ (1803) ողորմութեամբն Աստուծոյ շինեցաւ պարիսպս ձեռամբ Տեսոն Ղազարու սրբազան առաջնորդի» (Ազգր. Հանդ., 1911, էջ 67): Երնարար վանահայր եղած է նաև Գրիգոր, որ վերանորոգած է Ս. Խաչ եկեղեցին եւ միաբաններու բնակարանները՝ իրեն ձեռնառու ունենալով Յակոբ աղան (հմմտ. վերը՝ արձանագրութիւն 1817էն): Ասոր յաջորդը կ'ըլլայ Սարգիս վրդ. Պարտիկակցին, որուն խնդրանքով Յոհանն վանանդեցին կը ներբողէ Վարազայ սուրբ Խաչը:

Սարգիս առաջնորդութենէ կը հրաժարի եւ յաջորդ կ'ունենայ Բարսեղ վարդապետի տեղապահութենէ յետոյ Մկրտիչ վարդապետ Գաղատացին, զոր Թամուր փաշան խեղղամահ կ'ընէ 1832ին: Անոր կը յաջորդէ Ղազար Բերկրցին զուցէ Երկրորդ անգամ Եթէ քիչ յառաջ յիշուած արձանագրութեան թուականը ճիշդ է (1803), որովհետեւ հոն յիշատակուած գործունէութիւնը այս Ղազարի կը հայրի: Նա 1836ին կը հրաժարի դժգոհ ըլլալով վանի մեծամեծներէն, որոնց դէմ քաջարար ժողովրդեան շահը պաշտպաններ էր: Իր յաջորդն է Յարութիւն վարդապետ Սարայեան, եւ որ սակայն չէ կրցած իր աթոռին վրայ հաստատուն մնալ: Վանի եւ Վարազի առաջնորդ եղած են ապա Պետրոս արքեպ. Կուրապցին եւ Մկրտիչ Վրդ. Նարեկացին, Մովսէս Լիմնեցի, որոնք Երեքն ալ աննպաստ պարագաներու հետեւանքով կը ստիպուին հրաժարիլ: Մովսէսին յաջորդը կ'ըլլայ զարձեալ Լիմի միաբան մը Գարբէլ Վ. Ծորոյեան, որ էջմիածին Երթալով եպիսկոպոս կը ձեռնադրուի, որ Սիոն եկեղեցին ցորենի շտեմարանի կը վերածէ, որ շինարար

⁶³ 1801ին Գաւիթ կաթողիկոս կու տայ «Կոնդակ առաջնորդութեան եւ վիպական եպիսկոպոսութեան վարազայ սուրբ Խաչ վանիցն առաջնորդ Յարութիւն վարդապետին» ուր կ'ընէ «... հպկասէր եւ լուսավարդապետին» ուր կ'ընէ «... հպկասէր վիճակացեալ շաղկապս հաւատացելոցք ի Քրիստոս» վիճակացեալ Վարազայ սուրբ Խաչի հրաշքաբան Վանից... լոցք Վարազայ սուրբ Խաչի հրաշքաբան Վանից... նախ հարազատս եւ միաբանից նորին խոհեմամբ վարդապետաց եւ արեղայից եւ այլոց աստիճանաւ վարդապետաց զաւակն սրբոյ Աթոռոյս զՅարութիւն յոգնաշխատ վարդապետն յղեալ էիք ի սուրբ Թիւն յոգնաշխատ վարդապետն մեր զտէր Յարութիւն զգոնամբ վարդապետն ի տօնի Գիւտի սուրբ Խաչին... ձեռնադրեցաք եպիսկոպոս արկեալ գոստով Խաչին... ձեռնադրեցաք եպիսկոպոս արկեալ գոստով Վրդ. Սարգիսեանի ի միաբանս խաչանման» (Գիւան, Ձ., արա գոստով Վրդ. Սարգիսեանի ի միաբանս խաչանման» էջ 142—143):

րական գործունէութիւն կ'ունենայ եւ Վանի Հայերու կրթական մակարդակը կը ջանայ բարձրացնել: Իր օրով 1857ին Վարազ կու գայ եւ կամաց կամաց իր ազդանուէր գործունէութեամբն անուն ու համբաւ կը շինէ Մկրտիչ Խրիմեան, Հայոց սիրելի Հայրիկը: Նա կը բանայ ժառանգաւորաց վարժարանը, զպրոց ու տպարան, ուր կը տպուի «Արձուի Վասպուրական» թերթը (Փորձ, 1879, IV, էջ 60—61): Ժառանգաւորաց վարժարանը ետքէն Երկրագործական վարժարանի կը վերածուի եւ Վարազ Վանի առաջնորդարանին իրաւատութենէն կը հանուի⁶⁴ (Միաբարեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 186—188 եւ Բաֆֆի, Կայծեր, Բ., էջ 251—284): Պարագաները Խրիմեան Հայրիկը Վարազէն կը հեռացնեն եւ անոր ետեւէն դժբախտարար դիտութիւնն ու զարդացումն⁶⁵ ալ վանքէն կը հեռանան եւ ան կրկին Վանի առաջնորդարանին իշխանութեան կ'ենթարկուի շատ զոյգն առաւելութիւններ փրկելով: Խրիմեանի⁶⁶

⁶⁴ Վանի եւ Վարազի առաջնորդութիւններն ընդհանրապէս միշտ մէկ անձի վրայ միացած էին յատկապէս ԺԹ. դարուն է որ զոյգ առաջնորդութիւններ կը ստեղծուին (հմմտ. նաև Բիւզանդիոս, 1902, Թ. 1930): — Այս գրութեան մէջ զլուսարար այն առաջնորդները նկատուցութեան տակնք, որոնք Վարազի յարաբերութեամբ յիշուած էին:

⁶⁵ Վարազի կրթական հաստատութեան ու գործունէութեան յիշումակը կը տօնախմբուի 1910ին (հմմտ. Չիլոնի Տ., Վարազայ յորեկան, Կ. Պոլիս 1910): — Վարազի մէջ Արձուի Վասպուրական թերթէն դատ ուրիշ գրութիւններ ալ կը տպուին (Արարս, 1898, էջ 61): — Վանքին բարգաւաճումին համար գրամահաւար եւս եղած է (Մշակ, 1878, Թ. 215): — Խրիմեանի գործունէութեան մասին տեսնել ԱՏԷ մեան Հ., Հայոց Հայրիկը, էջ 246—251):

⁶⁶ Խրիմեանի ժամանակ կ'ապրէր Երեմիա եպ. Սարգիսեան, որ եպիսկոպոսական ձեռնադրութիւն տաւ է Գէորդ կաթողիկոսին (Արձապանք, 1884, էջ 102): Իր դամբանագիրը Վարազի մէջ է՝

«Մոզկեալ յարե մահ Խաչին
Արեամբ անմահ Վան Հայրենեաց
Սուր սով ի հուր ազգային
Ազատութեան զոհ անմոռաց:

Եկեղեցւոյ ախոյեան
Ահաւորին փոյլ անողոք,
Անբիծ վարուր լոյս բանին
Սիրոյ ծաւալ կենսանորոգ:

Հոյեալունչ բանաստեղծ
Սրբութեան սուրբ յերգս ազի,
Յիշատակաւ լից անկեղծ
Չուրիս հայկեան շուք տանարի:

Այլ ծով արեան արտասուաց
Ի վերջ սեւ սուգ զիւրան համակեաց
Սիրան ի ծոցին հարուած
Վան ի Վարազ աւանդ մնաց»:

Երեմիա եպիսկոպոս Տէր Սարգիսեան Տէվկանց, ծնանի 1831, վախճանի 1885, Յուլիս 10 (Ազգր. Հանդ., 1911, էջ 67): — Վարազի միաբան էր նաև Գրիգորիս եպ. Ազատունի, որ ետքէն Կարսի առաջնորդ կը կարգուի (Արեւելք, 1891, Թ. 2289): — Վարազի մէջ

